բարեւնապետի Թումայ վարդապետի» գրել է ՊՀԷ (=1428) թուին մի Յայսմաւուրք*. որ Յոհաննէսն է, որդի Յակոբ քահանայի, թէ Մանդասարի, թէ Յովհաննէս Բաղիշեցին՝ ՊՁԴ թուին մեռած արդէն, ասել չենք կարող։ Թովմայի աշակերտների կարգում վերոյիշեալ վարդապետների հետ ՊՁԴ (=1435) թուին յիշուած են Ներսէս և Ստեփանոս, «որ կան յաշխ՝տութ՝ի ած՝աշունչ տաւից»։ Սոքա կոչուած են «գրոց ա՝շկատեալ որդիք»՝ Հերապետի, Յո՝հան, Ղազար կրաւնաւորի, Աբրահամ փիլիսոփայի և Ներսէս եկեղեցպանի հետ»**։

Յակոբ գրիչ ՊԿԷ (=1418) թուին գրել է Տաթեւացու Քարոզգիրքը Խառաբատայ վանքի Կարապետ վարդապետի համար, որի մէջ յիշում է «այլ և յետ ք՝ի երախտաւոր հոգեւոր հայրն իմ զմեծ վ՝դան Գրիգոր (Տաթեւացին), որ զսակաւ գիրս ուսոյց մեզ։ Նաև զուսուցիչն և զմարմնաւոր երախտիքն, զոր ունին ի վերայ մեզ (sic), զ՝ածապարփակ հոգին զԹումայ վդ՝ան, որ զօրինակն շնորհեաց և յաջողեաց»։ Նոյն Յակոբ գրիչն է, որ ՊՁԱ (=1432) թուին Երուսաղէմում գրելով Տաթեւացու Հարցմանց գիրքը Մարտիրոս եպիսկոպոսի համար, խնդրում է յիշել «և զ՝դ՝ զ՝ծնօղսն մեր և զուսուցիչքն, զԳրիգ՝ը մեծ վր՝դան, որ զԲաղուածոյս է արբ՝ել և զԹ՝մ՝մ վր՝դտ Մեծոփայ, որ անչափ և անեղր խնամել է զիս հ՝գր և մր՝ մեւր»***։ Թովմայի գրիչ աշակերտների մէջ նշանաւոր է Կարապետ քահանան, Ստեփանոս դպրի հայրը, որ վերև յիշուեցաւ։ Նա գրել է մի Մաշտոց Տէր Յուսկան որդի ուխտի Մկրտիչ վարդապետի (Ողբեկենց) համար ՊՁԱ (=1432) թուին, մի աւետարան ՊՁԲ (=1433) թուին Արճէշ քաղաքում, ուր խընդրում է յիշել «և զուսուցիչն իմ զքաջ քարտուղարն Թումայ բարեւնապետն». ՊՁԶ (=1437) թուին մի Յայսմաւուրք (իւր Ստեփանոս որդու գործակցութեամբ) Թովմայի աշակերտ Յովհաննէս եպիսկոպոսի օրինակից։ Կարապետ քահանան նահատակուել է Արճէշ քաղաքում իւր եղբայր և աշակերտ Վարդան քահանայի յիշատակարանի համաձայն†։ Աշակերտների թուում պէտք է յիշել և իւր եղբօրորդիներին, որոնցից չորսը սարկաւագ էին, ինչպէս տեսանք վերև, և «զփոքր երիցանիս զՅկ՝ը, զՍփ՝ս և զՀերապետ», որ չգիտենք նոքն են վերոյիշեալ անուանակիցների հետ, թէ ոչ։

Թովմայի դասախօսութիւնների բովանդակութեան մասին մեր տեղեկութիւնները շատ աղքատ են. ըստ Կիրակոս Բանասէրի

---

* Անդ. 89.

** Նոր Նիւթեր. Ար. 759. 763. 760. (22. 26. 25)։

*** Ձեռ. Ս. Էջմ. Մատ. № 2155/2145 եւ 1225/1125.

† Նստարդ 101. 102. 111. 169. 171/2.